«ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

N 01

ԾԱՆՈՒՑՈՒՄ 29.01.2026թ.

«Ռուբեն Խաչատրյան» ԱՁ
ՀՎՀՀ՝ 35161959
ք.Երևան, Շենգավիթ 2 փող., տուն 1

«ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հակակարկտային ցանցի պատրաստման համար օգտագործվող նյութերի ձեռքբերման նպատակով 2025 թվականի սեպտեմբերի 12-ին հրապարակվել է «ԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-2025/88» ծածկագրով ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել նաև «Ռուբեն Խաչատրյան» ԱՁ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն): Գնահատող հանձնաժողովը 2025 թվականի սեպտեմբերի 23-ին կայացած նիստում «Աքսել» ՍՊԸ-ին ճանաչել է որպես ընտրված մասնակից 1-ին չափաբաժնով և սահմանված կարգով մասնակցին ներկայացվել է «ԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-2025/88» ծածկագրով պայմանագրի նախագիծը, որը վերջինս սահմանված ժամկետում իր կողմից ստորագրված ներկայացրել է: Այնուհետև մասնակիցը հայտնել է, որ ամբողջությամբ հրաժարվում է պայմանագրի կատարումից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և/կամ որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, համապատասխանաբար՝

280 000 ՀՀ դրամ (պայմանագրի ապահովման գումար) Հ/Հ՝ «900008000664»

420 000 ՀՀ դրամ (պայմանագրի որակավորման ապահովման գումար) ՀՀ՝ «900008000698» սահմանված ժամկետներում (սույն ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրերի ընթացքում) վճարելու դեպքում, պատվիրատուի ղեկավարը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգկրելու մասին պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազոր մարմնին:

Պայմանագրի և որակավորման ապահովումները կանխիկ ձևով վճարված լինելու դեպքում՝ անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարություն Ընկերության կողմից ուղղված դիմումի պատճենը՝ ապահովման գումարները նշված հաշվեհամարին փոխանցելու մասին:

«ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա.ԱԴԱՄՅԱՆ